ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 31 մայիսի 2019թ.

Նիստին մասնակցում էին ավագանու 12.03.2018թ. N22-Ա որոշմամբ ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Ավետիք Ասոյանը, Արգամ Շառոյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը:

Օրակարգում՝

1. «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին»

համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը ներկայացրեց, որ նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 16-ի N 30 եզրակացությունն ու «ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը: «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով՝

1. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը, ըստ որի համայնքի ավագանին կարող է որոշում ընդունել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
2. «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածները, որոնց համաձայն՝
   - համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է սույն օրենքով և այլ օրենքներով պարտադիր մշակման ենթակա քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) երկու փաստաթղթերով՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծով և քաղաքաշինական գոտիավորման նախագծով,

- մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝ Կառավարության սահմանած կարգով հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

3. Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը, որը սահմանում է, որ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը սեփականատիրոջ նախաձեռնությամբ սահմանված կարգով փոփոխելու դեպքում, բացառությամբ՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող (նախատեսվող) հողամասերի, հողամասի սեփականատերը, ըստ գույքի գտնվելու վայրի, եռամսյա ժամկետում համայնքային բյուջե է մուծում հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

Որոշվեց՝

հավանություն տալ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Հայկ Վարդևանյան

Ավետիք Ասոյան

Արգամ Շառոյան